ՍԵԴԱ ՔՈՉԱՐՅԱՆ

ՀՌՈՄԵԱԿԱՆ ՍԵՆԱՏԸ Ք. Ա III-II ԴԱՐԵՐՈՒՄ (ըստ Տիտոս Լիվիոսի)

Հին Հռոմի պատմությունը բաժանվում է երկու մեծ դարաշրջանի՝ հանրապետության և կայսրության: Դրանց սահմանագիծը համարվում է Ք.ա. I դարի 30-ական թվականների վերջը՝ Անտոնիոսի մահը և Օկտավիանոսի իշխանության ամրապնդումը: Դարաշրջաններից յուրաքանչյուրն իր հերթին ենթաբաժանվում է մի քանի շրջափուլերի: Հանրապետության պատմությունը ներկայացնում է հետևյալ պատկերը. թագավորական շրջափուլ (VIII-VI դդ.), պատրիկների ազնվապետական հանրապետություն (V-III դդ.), նոբիլների ընտրախավի հանրապետություն (III - II դդ.), քաղաքացիական պատերազմներ և հանրապետության անկում (II դ. վերջ - I դ. 30-ական թթ.): Հռոմեական հասարակությունը բաղկացած էր երկու խավերից՝ պատրիկներից և պլեբեյներից: Պատրիկները հռոմեական բնիկ քաղաքացիների արտոնյալ խավն էին, իսկ պլեբեյները՝ եկվորներն էին: Պլեբեյները սկզբում ներառված չէին կառավարման համակարգի մեջ: Օրենքով արգելված էր նաև պատրիկների և պլեբեյների ամուսնությունները: Բայց նրանք ծառայում էին հռոմեական բանակում և վճարում էին հարկեր: Հանրապետության հաստատումից ի վեր, շուրջ երկու հարյուրամյակ պայքար էր ընթանում պատրիկների և պլեբեյների միջև հիմնականում երեք հարցերի շուրջ. քաղաքական իրավունքների հավասարեցում, պարտային վիճակի թեթևացում և պետական-համայնական հողից օգտվելու իրավունք(ager publicus): Հռոմեական թագավոր Սերվիոս Տուլլոսի իրականացրած բարեփոխման համաձայն, երբ հռոմեական քաղաքացիներն ըստ ունեցվածքային կարողության բաժանվեցին հինգ խմբի, պլեբեյները որպես ռազմական ծառայություն իրականացնող քաղաքացիներ, ընդգրկվեցին կուրիալ (տոհմացեղային աշխարհաժողով) ցուցակներում: Այս բարեփոխումով առաջին քայլն իրականացվեց քաղաքական իրավունքների հավասարեցման ուղղությամբ, քանզի պլեբեյները իրավունք ստացան քվեարկելու համայնական ժողովում: Պատրիկների և պլեբեյների պայքարի արդյունքում հաստատվեց քաղաքական իրավահավասարություն: Պլեբեյների հաղթանակը պայմանավորված էր նաև հատուկ պլեբեյական պաշտոններ ստեղծելով(օր. ժողովրդական տրիբունի (Ք.ա 494թ.), պլեբեյական էդիլների պաշտոնը (Ք.ա. 494թ.): Պայքարի արդյունքում ձևավորվեց նոր պատրիկա-պլեբեյական վերնախավ՝ նոբիլիտետ (nobilitas-ազնվականություն) անվանումով[1] :

Հանրապետության պատմության երրորդ շրջափուլը մեծ նվաճումների և Իտալիայում հողագործական տնտեսությունների ծաղկման ժամանակաշրջան էր: Աթենական պետության ամենազարգացած փուլը, որն ընդգրկում է Սալամինում պարսիկներին պարտության մատնելուց (Ք.ա. 480թ.) մինչև Պելոպոնեսյան պատերազմների սկիզբն ընկած ժամանակաշրջանը (Ք.ա. 431թ.), (որի արդյունքը եղավ հզոր Աթենական պետության կործանումը), ուներ հատուկ անվանում՝ պենտակոնտաէթիա՝ «ոսկե հիսնամյակ»: Հռոմեացիները սիրում էին ընդգծել և զուգահեռ համեմատականներ անցկացնել իրենց և հունական պատմության միջև, նրանք ևս ունեին իրենց «ոսկեդարը»: «Հռոմեական ժողովուրդը ուներ ամենալավ բարքերը և ապրում էր մեծագույն ներդաշնակության մեջ Կարթագենի դեմ երկրորդ և վերջին (երրորդ) պատերազմների ժամանակաշրջանում»,-գրում էր Սալլյուստիոսը (Sall.,Hist.,1,11) հռոմեական երջանիկ հիսնամյակի սահմանները նշելով Ք.ա 200-146թթ.: Պատմաբաններին այս շրջանը գրավեց որպես երկու քաղաքացիական պատերազմների՝ պատրիկների և պլեյբեյների 200-ամյա (Ք.ա. V-IVդ.) և Հանրապետության հարյուրամյա ճգնաժամի (Ք.ա. II դ. 30-ական թթ. և Ք.ա. I դ. 30-ական թթ.) միջև ընկած համեմատական հանգիստ ժամանակաշրջան, որը նաև հռոմեական պետության պոլիսային՝ քաղաք-պետության ծևի կայացման և անկման շրջան էր: Կիկերոնի կարծիքով Կիվիտասը, որը պոլիսային համակարգի հիմքն է կազմում, «ժողովրդի ստեղծածն»(constitutio populi) է, ընդ որում սա ոչ թե ուղղակի մարդկանց միություն է, այլ«իրավունքի հիմունքով միավորված քաղաքացիների միություն է » (Cic.De rep.1,41):

Ք.ա. II դարում Հռոմեական հասարակությունը՝ կայունացնելով իր քաղաք-պետության համակարգը, ապրում էր պետության և հասարակության ամենակայուն հարյուրամյակը, խոշոր նվաճումների և քաղաքական ու ռազմական պատմության մեծ հերոսների ժամանակը: Երկրորդ Պունիկյան պատերազմը (Ք.ա. 218-201թթ.) առանձնահատուկ տեղ է զբաղեցնում հռոմեական ժողովրդի պատմական հիշողության մեջ: Ք.ա. III դարի երկրորդ կեսին երկու հզոր ախոյաններ՝ Հռոմը և Կարթագենը, «երկու հզոր քաղաքներ, որոնց միմյանցից բաժանում էին ցամաքի և ծովի մեծ տարածություններ», (Liv.-XXI,1.1) պատրաստվում էին Արևելյան Միջերկրածովի քաղաքներին տիրելու համար հերթական վճռորոշ պայքարին: Ք.ա. 218թ. հռոմեացիները առաջինը ենթարկվեցին հարձակման և հաջորդ 15 տարիներին ուժերի մեծ լարումով պաշտպանում էին հայրենի Իտալիան Հաննիբալի բազմացեղ զորքից: «Լավագույն ժամանակաշրջանի» ավարտը Սալլյուստիոսը համարում է Կարթագենի կործանումը (Ք.ա. 146թ.): Հռոմեական պատմիչների կարծիքով՝ այն միայն պատճառ էր իրադարձությունների, որ քայքայեցին բարեկեցիկ

դարաշրջանի խաղաղությունը: Նրանց կարծիքով,երբ արտաքին վտանգը վերացավ, սկսվեցին ներքին քաղաքացիական երկպառակությունները և բարքերի անկումը: Բայց «անկումը» նոր որակ ստացավ առաջին քաղաքացիական արյունահեղության (Տիբերիոս Գրակքոսի սպանությունը) ժամանակ՝ Կարթագենի կործանումից 12 տարի անց: Ուստի չհակասելով անտիկ հեղինակների տրամաբանությանը, կարող ենք երկարածգել Սալլյուստիոսի նշած հանրապետության բարեկեցության ժամանակաշրջանը և «ոսկե դարը» Երկրորդ Պունիկյան պատերազմից (Ք.ա. 218-201թթ.) մինչև Տիբերիոս Գրակքոսի տրիբունատը(Ք.ա. 133թ.):

Ուշ հանրապետությունում տեղի ունեցող բռնությունները չպետք է գնահատվեն որպես հռոմեական արժեքների հանկարծակի շրջադարձ, այլ երկար հակասությունների արդյունք, որոնք ճնշված էին քաղաքական խելամտության և արտաքին հաջողությունների քողի տակ: Մյուս կողմից, չպետք է անտեսել անհատների դերը:Նկատի ունենք նախ և առաջ Գրակքոս եղբայրներին, ովքեր հայտարարեցին նոր քաղաքական գործընթացի սկիզբը[3]:

Այս իրադարձությունները իրենց արտացոլանքն են գտել հռոմեացի պատմիչ Տիտոս Լիվիոսի(Ք.ա. I դարի երկրորդ կես) «Հռոմի պատմությունը սկսած քաղաքի հիմնադրումից» աշխատության մեջ: Անտիկ հեղինակները հիանում էին Լիվիոսի ճարտասանական տաղանդով. Տակիտոսը նրան անվանում է «ճարտասանության բնագավառում առաջիններից մեկը» (Tac. Ann.IV,34), փիլիսոփա Սենեկան՝ «Կիկերոնից և Ասսինիոս Պոլլիոնից հետո ամենաճարտասան մարդը» (Sen.Let.,100.9),Կվինտիլիանոսը նրան համեմատում է Հերոդոտոսի հետ (VIII.1.3):

Ապրելով քաղաքացիական պատերազմի տարիներին՝ (որը լի էր վտանգներով), Լիվիոսը ամբողջ կյանքում ատելությամբ վերաբերվեց բոլոր սոցիալական ցնցումներին և հարգանքով նրանց նկատմամբ,ովքեր կասեցրին սոցիալական քաոսի վտանգը: Հռոմեական ողջ պատմությունը մինչև Ք.հ. 9 թվականը Լիվիոսը շարադրել է 142 գրքերում,որոնցից մեզ է հասել միայն 35-ը: Լիվիոսը համարվում է առաջին հռոմեական «պրոֆեսիոնալ» պատմիչը: Ի տարբերություն իր նախորդների՝ Գ.Սալլյուստիոսի, նա երբեք չզբաղվեց քաղաքական գործունեությամբ: Չղեկավարեց զորք, չդարձավ կուսակալ, չկատարեց դիվանագիտական հանձնարարություններ: Պատմությունը, և միայն պատմությունը դարձավ նրա «պրովինցիան», գործունեության բնագավառը, որտեղ արտահայտվեց նրա քաղաքական հավատամիտ մարտավարությունը և՝ դիվանագիտական գիտելիքները: Օգոստոսը իրեն շրջապատել էր բանիմաց մասնագետներով, օր. նշանավոր բանաստեղծ Վերգիլիոսը(Ք.ա. I դարի կես)՝ նրանց համարելով պետական օրգանիզմի տարրեր և ոչ թե սուվերեն

ժողովրդի ընտրյալներ: Յուրաքանչյուրին հանձնարարված էր գործունեության որոշակի բնագավառ՝ ռազմական գործ, ճարտարապետություն և այլն: Գործառույթների այսպիսի բաժանումը՝ զուգակցված պետության կողմից խրախուսանքներով, ուներ իր որոշակի առավելությունները, հատկապես պետական կառավարման բնագավառում: Բայց այն գրական ստեղծագործության վրա դնում էր սահմանափակումներ[4]:

<u>Հռոմեական հանրապետության սոցիալական կառուցվածքը Ք.ա. III-II դարերում:</u> Հին խավերի `պատրիկների և պլեյբեյների պայքարը կորցրեց իր արդիականությունը Հռոմեական հանրապետությունում Հանձիբալյան պատերազմից մի քանի տասնամյակ առաջ (Ք.ա. 287թ. համարվում է պայքարի ավարտը): Հռոմի բնակչության զգալի մասը ծագում էր պլեյբեյական տոհմերից: Պատրիկների խավը՝ հին տոհմային ազնվականությունը, նախկինում ունեցած իր հզորությունից պահպանեց միայն որոշակի պատվավոր լիազորություններ: Բացի այդ, Ք.ա. III-II դարերում պատրիկները համարվում էին ազնվազարմ հռոմեացիները՝ 7 բլուրների զտարյուն բնիկները: Պատիկների և պլեյբեյների պայքարի արդյունքում ձևավորվեց նոր ազնվականությունը՝ նոբիլիտետը(nobilitas): Հանրապետության տիրապետող դասը բաղկացած էր երկու մասից՝ ագրարային և առևտրա-ֆինանսական: Այս երկու խմբերը ըստ հռոմեական պատկերացումների ներկայացնում էին երկու խավեր՝ սենատորներ և հեծյալներ: Ուշ հանրապետության շրջանում այս երկու խավերի տնտեսական և քաղաքական դրությունը թուլացավ: Քաղաքացիական պատերազմները զգալիորեն անդադարձան խոշոր հողատերերի վրա: Բացի այդ, սենատորական խավի ներկայացուցիչները (խոշոր հողատերերը), տիրապետող դասակարգի ամենապահպանողական մասն էին միայն: Այն իր ճակատագիրը կապում էր պոլիսային ավանդույթի և առկա տնտեսական և քաղաքական արժեքների հետ: Սենատական ընտրախավը քաղաքացիական պատերազմների ընթացքում և արդյունքում զգալիորեն ընդլայնվեց ի հաշիվ պրովինցիալ ազնվականության՝ homines novi-ի:Այս հին ազնվականությունը այլևս ոչ քաղաքական ծրագրերի հեռանկար ուներ և ոչ էլ նախկին հզորություն:

Հռոմեական քաղաքացիական հասարակությունը բաժանվում էր մի քանի խավերի՝ ordines-ների (ordines այս բառը կիրառվում էր ցենզորական ցուցակներում գրանցված խմբերի նկատմամբ): Գոյություն ունեին երեք հիմնական խավեր՝ սենատորներ, հեծյալներ և հասարակ քաղաքացիներ՝ պլեբս:Ք.ա. III դարից սկսած պլեբսի մեջ ներառվում էին բոլոր այն քաղաքացիները, ովքեր հեծյալների խավից ցածր ցենզ ունեին(հանրապետության վերջում հեծյալների ցենզը կազմում էր 400հազ. սեստերց կամ 400 յուգեր հողատարածք): Սենատորները և հեծյալները ներկայացնում էին ամենաբարձր

խավերը(amplissimi ordines): Երկու խավերն էլ ներառում էին հողատերերի հարուստ վերնախավը[4]: Սկզբում 18 հեծյալ ցենտուրիաները ձևավորում էին հռոմեական հեծելազորը: Նրանց հավաքագրում էին առաջին ունեցվածքային ցենզի ամենահարուստ անձանցից: Բայց, քանի որ հեծելազորում ծառայությունը բավականին թանկ արժեր, ապա հեծյալները պետությունից ֆինանսական օժանդակություն ստացան ձի գնելու և նրան խնամելու համար: Ք.ա. IV դարում պետական գումարով գնված ձի ունեցող հեծյալների կողքին (equites equo publico) առաջացան նաև սեփական միջոցներով ձի գնած հեծյալներ(equites equo privato): Ք.ա. III դարից սկսեց հեծյալների խավի ձևավորումը (ordo equestor): Հեծյալները դադարեցին հեծելազորում ծառայությունը, որը արդեն հավաքագրվում էր դաշնակիցներից, և բավարարվեցին հետևակի և հեծելազորի սպաներ տալով: Այսժամ հաստատվեց նաև հեծյալների ցենզը՝ 1 միլ. ասս կամ 400 հազ. սեստերց: Ք.ա. 218թ Կլավդիոսի օրենքը հեծյալների խավի ձևավորման հաջորդ քայլը եղավ.այն արգելեց սենատորներին առևտրով զբաղվել: Ազնվազարմ հռոմեացիները արհամարհանքով էին վերաբերվում առևտրին և ֆինանսական գործարքներին, ուստի պատրիկները հիմնականում զբաղվում էին հողագործությամբ և հասարակական գործունեությամբ: Սրա շնորհիվ հեծյալների ձեռքը անցավ առևտուրը,վաշխառուական գործունեությունը և ընդհանրապես ֆինանսական գործարքները:Հեծյալները դարձան հռոմեական ֆինանսական ազնվականությունը[5]:

Սենատորների,նախկին կոնսուլների և պրետորների որդիները ևս համարվում էին հեծյալներ,քանի դեռ չէին զբաղեցրել կուրիալ պաշտոններ: «Հեծյալները սենատի «մատակարարողներն» են, նրանցից ընտրում են սենատորներին, սենատորներից նշանակում կոնսուլների և զորահրամանատարների»,- գրում է Լիվիոսը(Liv.XLII,61,5): Երկու խավերի ներկայացուցիչները կրում էին գրեթե միանման վերնաշապիկներ՝ tunica clava՝ կարմիր եզրագծով. սենատորական հագուստի (toga) եզրագիծը ավելի հաստ էր:

Հռոմեացիները հազվադեպ էին օգտագործում ordo բառը այն քաղաքացիների նկատմամբ, ովքեր իրենց ունեցվածքային ցենզով ցածր էին կանգնած հեծյալներից: Խոսքը հեծյալների մասին է: Այն միատարր չէր. տարբեր ունեցվածքային կարգավիճակի քաղաքացիների միություն էր:

Ք.ա. III-II դարերում Հռոմի տնտեսության մեջ տեղի ունեցած փոփոխությունները՝ արտադրության մեջ ստրուկի աշխատանքի գերակայությունը, խոշոր հողատիրությունների աճը և մանր ազատ հողատերերի քայքայումը, դրամական-վաշխառուական և առևտրական կապիտալի աճը իրենց ազդեցությունն ունեցան նաև քաղաքացիների սոցիալական կացության վրա: Արդյունքում, հարուստ և աղքատ քաղաքացիների միջև եղած անջրպետը

խորացավ: Դրա պատճառները բազմաթիվ էին: Մի կողմից, երկարարատև պատերազմները հողատեր գյուղացուն հեռու էին պահում տանից: Անմշակ մնացած հողը կորցնում էր իր արժեքը: Հաննիբալի կողմից Իտալիայի բռնազավթումը նպաստեց այս գործընթացին: Միաժամանակ ստրուկների մեծ քանակության ներմուծումը Իտալիա հանգեցրեց ազատ արտադրողի աշխատանքի արտադրողականության նվազեցմանը: Ազատ գյուղացու աշխատանքը դարձավ անշահութաբեր: Հռոմ բերված գերի ստրուկների մի մասը հմուտ արհեստավորներ և հողագործներ էին, ուստի նրանց տերերը ավելի նպատակահարմար էին համարում արտադրության միջոցներ տրամադրել նրանց՝ շահույթի զգալի մասը ստանալու պայմանով:

Մյուս կողմից, անդրծովյան հողերը և հարստությունները կենտրոնացան ազնվականների ձեռքում: Իսպանիայուն և Արևելքում նոր տարածքների ձեռք բերումը,Կարթագենի կործանումը նոր հեռանկարներ բացեցին առևտրի և ֆինանսական գործարքների համար: Եկամտի մյուս աղբյուրը պրովինցիաներից հարկերի հավաքումն էր, որը պետությունը տվեց մասնավոր քաղաքացիներին (publicani): Այսպես Հռոմի կառավարող շրջանները կուտակեցին մեծ հարստություն[6]: Մայրաքաղաքի աղքատ բնակչությունը ամեն տարի համալրվում էր հողազուրկ գյուղացիներով:Նրանք ներգրավվում են քաղաքական կյանքի մեջ՝ գործիք դառնալով ամբոխավարների ձեռքին[7]:

<u>Հռոմեական հանրապետության պետական կառույցը Ք.ա. III-II դարերում:</u> Հռոմեական հանրապետության պետական կառույցի հիմնախնդիրները գտնվել են անտիկ հեղինակների ուշադրության կենտրոնում: Նրանցից Պոլիբիոսը,որը շուրջ 17 տարի պատանդ է եղել Հռոմում (Ք.ա.167-150թթ.) փորձում էր հասկանալ. «թե ինչպես և ինչպիսի պետական մարմինների շնորհիվ հռոմեացիները ոչ ամբողջական 53 տարիների ընթացքում կարողացան գրավել ողջ բնակելի աշխարհը (էկումենո) և ենթարկել իրենց անբաժան տիրակալությանը»(Polyb.VI.1.3): Պոլիբիոսը դրա գլխավոր պատճառը համարում էր Հռոմի կառավարման համակարգը, որտեղ իշխանության տարբեր մարմինների ներդաշնակությունը ապահովում էր հռոմեացիների ներքին և արտաքին հաջողությունները: Քաղաքական ցնցումներով լի ժամանակաշրջանում ապրող Կիկերոնի համար(Ք.ա. I դ. կեսեր) Հռոմի դասական ժամանակաշրջանի պետական համակարգի ուսումնասիրության նպատակն այլ էր. նա հռոմեական պետական համակարգը համարում էր մի տեսլական, որին անցյալի սերունդները հասել էին համառ ջանքերի շնորհիվ:Կիկերոնը ուներ գործնական նպատակ.հռոմեացիներին հիշեցնելով, թե նրանք ինչ են կորցրել անցյալում և ցույց տալ ինչպես վերագտնել այն[8]:

Հռոմեական հանրապետության պետական կառավարումը իրականացվում էր 3 մարմինների միջոցով՝ սենատ, աշխարհաժողով և մագիստրատուրաներ: Սենատը եղել էր թագավորական ժամանակշրջանում (Ք.ա. VIII-VI դդ.) իբրև խորհրդակցական մարմին,նրա կարևոր գործառույթներից էր աշխարհաժողովի որոշումների հաստատումը, այսինքն. «որոշումը ընդունված կհամարվի այն դեպքում, եթե այն հաստատեն հայրերը. եթե քննարկվում է օրենքի կամ պետական պաշտոնյայի հարց, մինչ ժողովուրդը կանցնի քվեարկման, դեռևս նրա արդյունքի անորոշ լինելու դեպքում էլ, հայրերը նախօրոք տալիս են իրենց համաձայնությունը» (Liv.I.17.9):

Հանրապետության ժամանակ գոյություն ունեին աշխարհաժողովի 3 տեսակ.

1. Կուրիատ աշխարհաժողով(comitia curiata),որը տոհմացեղային բաժանման հիմունքով ստեղծված աշխարհաժողովն էր: Թագավոր Ս. Տուլլիոսի՝ հռոմեացիներին ըստ ունեցվածքի 5 խմբի՝ ցենզի բաժանելուց հետո այս աշխարհաժողովը կորցրեց իր քաղաքական ազդեցությունը:Նրանց գործառույթների մեջ էր մտնում մյուս աշխարհաժողովներում ընտրված պետական պաշտոնյաների հաստատումը, կտակի և որդեգրման հետ կապված գործերը:

2. Ցենտուրիատ աշխարհաժողով(comitia centuriata).սա ծագեց Ս. Տուլլիոսի ռեֆորմի արդյունքում.այս ժողովը ընտրում էր պետական այրերին՝ կոնսուլներ, պրետորներ,ընդունում էր օրինագծեր, վերանայում էր կոնսուլների կողմից մահվան դատապարտված անձանց բողոքը (provocatio ad populum):

3. Տրիբուսային աշխարհաժողովներ(comitia tributa).ըստ տրիբների՝ Հռոմի տարածքային բաժանման հիման վրա ստեղծված ժողովներ, որին մասնակցում էին և պատրիկները և պլեբեյները:

Մագիստրատները ընտրվի պետական պաշտոնյաներ էին. գրեթե բոլոր պաշտոնները մեկ տարով էին (բացառությամբ ցենզորի),կոլլեգիալ էին:Չէին վճարվում, պաշտոնավարումը համարվում էր պատվի գործ(causa honores):Այդ պաշտոնյաներն էին կոնսուլները, պրետորները և այլոք:

Փաստորեն հռոմեական քաղաքացիները ունեին 3 հիմնական օրենսդրական իրավունքներ՝ աշխարհաժողովներում քվեարկելը, ներառած պատերազմ հայտարարելու և խաղաղության պայմանագիր ստորագրելու իրավունքը, քաղաքական և ռազմական պաշտոնյաների ամենամյա ընտրությունը, ցենտուրիալ և տրիբունալ կոմիցիաներում դատ անցկացնելու իրավունքը[9]:

Պոլիբիոսը այս պետական կառույցը համարում էր խառը պետական կառույց ի տարբերություն պարզ պետական կառույցների (միապետություն, արիստոկրատիա և դեմոկրատիա),որը չէր ստեղծվել օրենսդիրների կողմից, ինչպես օրինակ Սպարտայում իրականացրեց Լիկուրգոսը,այլ ժամանակի ընթացքում բնական զարգացում էր ունեցել(Polyb.VI.10,12-14):

Պոլիբիոսը կոնսուլի, սենատի և աշխարհաժողովների իշխանության մեջ տեսնում էր միապետության,ազնվապետության (արիստոկրատիայի) և ժողովրդավարության (դեմոկրատիայի) տարրեր: Պատերազմի ժամանակ իշխանության այս 3 մարմինները աշխուժանում էին: Խաղաղ ժամանակ յուրաքանչյուր մարմին իրականացնում էր իր գործառույթը՝ չմիջամտելով մյուսի գործառույթներին, թեպետև համագործակցում էր մյուս մարմինների հետ (Polyb.VI.18,2-8): Հռոմեական այս կառավարման համակարգը իր զարգացման գագաթնակետին էր գտնվում Հաննիբալյան պատերազմի ժամանակ (Polyb.-VI.11)[10]:

<u>Հռոմեական հանրապետության սենատը Ք.ա. III-II դարերում</u>: Ընդհանուր առմամբ, Ք.ա. III դարում հռոմեական պետական կյանքում գերակշռում էր բարի կամքի մթնոլորտը, որտեղ յուրաքանչյուր սոցիալական խումբ և կառավարման յուրաքանչյուր մարմին ցուցաբերում էր իր պատրաստակամությունը համագործակցելու մյուսների հետ: Բանակության այս մթնոլորտը իր արտացոլումը գտավ և մագիստրատների և աշխարհաժողովների՝ սենատի որոշումներին հետևելու քաղաքականության մեջ[11]: Հենվելով Տ.Լիվիոսի հաղորդած տեղեկության վրա, փորձենք հասկանալ, թե ինչպիսի դեր խաղաց սենատը հռոմեական պետության կյանքում Ք.ա. III-IIդարերում:

Ք.ա. IV դարը հռոմեական հանրապետության պատմության մեջ սեփական ուժերի համախմբման, ներքին ռեսուրսների կուտակման դարաշրջան էր:Հարյուրամյակի սկզբում Հռոմը ենթարկվեց գալլերի ստորացուցիչ հարձակմանը, բայց իր մեջ ուժ գտավ ոչ միայն իր նախկին հեղինակությունը վերականգնելու, այլ նաև հարյուրամյակի վերջում Իտալիայի զգալի մասի տիրակալը դառնալու: Այսպիսի մետամորֆոզի համար հիմք են հանդիսացել պետական կառավարման կազմակերպման փոփոխությունները, նոր գաղափարախոսության ձևավորումը, որը միավորեց հռոմեական ողջ հասարակությունը: Այս երկու հանգամանքները անմիջականորեն անդրադարձան նաև հռոմեական սենատի՝ որպես հանրապետության պետական կարևորագույն մարմնի վրա[12]:

Ք.ա. 312թ Օվինիոսի օրենքով սենատորներին նշանակելու իրավունքը անցավ ցենզորներին: Օվինիոսի օրենքը մեզ հայտնի է Ֆեստոսի շնորհիվ. «Ինչ որ ժամանակ նախկին սենատորները անարգանքված չէին զգում, քանզի թագավորները իրենց կամքով գրանցում և փոխարինում էին իրենց խորհրդի մեջ ներառնված սենատորներին. նմանապես էին վարվում նաև կոնսուլները թագավորի վտարումից հետո, ինչպես նաև կոնսուլական իշխանությամբ ռազմական տribունները՝ սենատի կազմի մեջ ներառելով իրենց հավատարիմ պատրիկներին, իսկ հետո նաև պլեբեյներին, մինչև որ չընդունվեց Օվինիոսի հանրաքվեն(Ք.ա. 312թ), որով հռչակվեց, որ այսուհետև ցենզորները սենատի

կազմի մեջ ներառեն ըստ կուրիաների բոլոր խավերից լավագույն մարդկանց: Արդյունքում ստացվեց, որ նախկին սենատորները, ովքեր կորցրել էին իրենց տեղը սենատում, դառնում էին անարգված» (Fest 246):

Այսպիսով, սենատի կազմի մեջ էին մտնում նրանք, ովքեր նախկինում զբաղեցրել էին բածրաստիճան պետական պաշտոններ՝ կոնսուլներ, պրետորներ, ցենզորներ: Սենատոր չէին կարող լինել ազատ արձակվածները և նրանց որդիները, ինչպես նաև հռոմեական քաղաքացուն պատիվ չբերող աշխատանք կատարող անձիք, օր մանր առևտրականները:

Հանրաքվեն սենատի ձևավորման իրավունքը տվեց ցենզորներին և պարտավորեցրեց նրանց սենատի կազմի մեջ ներառել բոլոր խավերից լավագույն հռոմեացիներին: Օվինիոսի օրենքի նպատակը այն էր, որ սենատը նոբիլիտետի ժողովի փոխարեն վերածվի ողջ հռոմեական ժողովրդի ներկայացուցչական մարմնի: Այս ուղղությամբ առաջին քայլերը իրականացրեց Ապպիոս Կլավդիոսը սենատի մեջ ներառելով նաև ազատ արձակվածներին (Ք.ա. IV դարի սկիզբ)(Liv., IX, 46, 10, Diod., XX, 36, 3)[13]:

Սենատը պաշտոնապես գոյություն ուներ մագիստրատներին խորհուրդ տալու համար: Այդ մասին են վկայում Լիվիոսի հետևյալ խոսքերը. «նա (կոնսուլ Մարցելլոսը) կգրի այդ մասին սենատին և կվարվի համաձայն նրա որոշման» (Liv.,XXV,7.1), «Կապիտոլիումում սենատ հրավիրվեց՝ սենատորների հետ պետության դրության, պատերազմի ընթացքի, պրովինցիաների և զորքի մասին խորհրդակցելու համար» (Liv.,XXVI,1,1):

Պատրիկ սենատորները ունեին երկու հատուկ գործառույթներ: Առաջինը, որը դարձավ զուտ ձևական, կայանում էր ժողովրդի (և հավանաբար պլեբսի) որոշումները վավերականացնելու մեջ և կոչվում էր senatusconsultum: Այսպիսով, սենատը վերահսկում և ղեկավարում էր ժողովրդական ժողովի գործունեությունը՝ ուղղորդելով այն ըստ իր կամքի, հաճախ առաջնորդվելով հետևյալ սկզբունքով. «Սենատորները ոչինչ չորոշեցին, բայց հասկացնել տվեցին,թե ինչ են ակնկալում»(Liv.,26.29.9), կամ «սենատորները որոշեցին.մի կոնսուլը մնա Իտալիայում,...» (Liv.,XXVI,28,3), «ժողովուրդը չմերժեց սենատի առաջարկությունը...» (Liv.,XXVII,34.11): Պաշտոնավարման համար ընտրված մագիստրատները իրենց գործունեության համար հաշվետու էին սենատին և սրանով կախված էին սենատի կամքից. «Սենատորները փնտրում էին, թե ում նշանակեն կոնսուլ.» (Liv.,XXVII,34,1), «Կոնսուլները հաշվետվություն ներկայացրեցին սենատին պետության վիճակի, ռազմական գործերի մասին,թե որտեղ և ինչքան զորք կա» (Liv.,24.11.1.2): «սկզբում երկու կոնսուլները սենատին հաշվետվություն ներկայացրեցին պետության դրության և պրովինցիաների վերաբաժանման մասին» (Liv.,XXVI,27,16), (Liv.,XXV,3.12)[14]:

Երկրորդը՝ interrex ընտրելն էր՝ ընտրությունները անցկացնելու համար, եթե մագիստրատները ի վիճակի չէին: Սենատը խորհուրդ էր տալիս մագիստրատներին ներքին և արտաքին քաղաքականության, ֆինանսական և կրոնական և օրենսդրական նախագծերի հարցերում: Նա կարող է նաև կասեցնել օրենքները գործողության ընթացքում՝ ցույց տալով դրանց թերությունները: Նա էր առաջադրում դիկտատորի (հաճախ կոնսուլներից մեկն էր լինում) թեկնածությունը, մագիստրատներին, տարբեր գործառույթներ նշանակում, որոշում prorogatio imperii-ն, հաստատում յուրաքանչյուր մագիստրատի և պրոմագիստրատի ռազմական բյուջեն (ornatio) (Liv.,XXVI,2.4), նշանակում կոնսուլների համար նախատեսված պրովինցիաները: Պատերազմի ժամանակ նա ազդեցություն ուներ հանձնաժողովների ընդարձակման և ընտրության վրա (Liv.,XXV.5.6, XXV,5.9), հաստատում էր հարկերի չափը, և քննարկում պատերազմի վարումը: Ֆինանսական բնագավառում հատատում էր հարկերի չափը, վերահսկում եկամուտը և ծախսերը, ղեկավարում aerarium-ը (Liv., XXIII,31.7):

Նա կարող էր հանձնարարել ցենզորներին վերագրանցել պայմանագրերը և կարգավորել դրամահատումը: Գործնականում պատերազմի վարումը, խաղաղության պայմանագրի կնքումը և արտաքին քաղաքականությունն վարումը գտնվում էր սովորաբար սենատի ձեռքում, բայց ձևականորեն պատերազմի հայտարարումը և պայմանագրերի վավերականացումը պատկանում էր աշխարհաժողովներին (Liv., XXIII,38.6): Նա հաճախ հյուրընկալում էր դեսպանների (Liv.,XXVI,30.1), (Liv.,XXVII,10,5), նշանակում սենատորներին որպես օգնականներ մագիստրատներին և պրոմագիստրատներին պայմանագրերի կնքման կամ նվաճված տարածքում բնակավայրի կազմակերպման հետ կապված: Սենատի միջնորդության էին դիմում Իտալական համայնքները, պրովինցիաների և նվաճված երկրների կլիենտները: Կրոնական կյանքը կառավարվում էր սենատի կողմից, որը կազմված էր հոգևորականների կոլլեգիայից և կարող էր անցկացնել կրոնական տոնակատարություններ և ծանոթացնել նոր պաշտամունքի հետ[15]:

Այս հարցերի շուրջ սենատի որոշումները կոչվում էին senatus cosultum. սա համարվում էր ուղղակի խորհուրդ censere, consulere, placere, այսինքն չէր պարտավորեցնում մագիստրատներին իրավական առումով, բայց իհարկե սենատը ակնկալում էր, որ մագիստրատները դրանցով կառաջնորդվեն, իսկ վերջիններս էլ շահարգռված չէին սենատի հետ բախման մեջ մտնելու, առավել ևս նրանք բոլորը պատկանում էին միևնույն դասի[16]:

Փաստորեն, Երկրորդ Պունիկյան պատերազմը ավելի ուժեղացրեց հանրապետության կառավարման մեջ սենատի դերը: Մասնավորապես, սենատը փաստացիորեն ուղղորդեց մագիստրատների իմպերիան երկա-

ռացնելու կամ ավարտելու իրավունքը: Հիմա Prorogatio-ն, քիչ բացառությամբ, արդեն տրվում էր senatusconsultum-ի հիման վրա (օր, Liv., XXII, 22, 1; XXIII, 25, 10; XXV, 3, 5): Դեռ ավելին, չնայած հետզհետե հաստատվեց պրոմագիստրատուրայի 1 տարվա ժամկետը, սենատը սկսեց իր հայեցողությամբ հաստատել պրոմագիստրատուրայի այլ ժամկետ «քանի դեռ նրանց հետ չի կանչել սենատը» (Liv., XXVII, 7, 17), «մինչ Աֆրիկայում պատերազմի ավարտը» (Liv., XXX, 1, 10) «մինչ սենատի նշանակած փոխարինողի ժամանումը» (Liv., XXXII, 28, 9): Պատերազմի ընթացքում հաստատված փորձը այնպիսի լայն տարածում գտավ հռոմեական պետական իրավունքում, որ հետագայում Պոլիբիոսը կհայատարարի. «Սենատից է կախված,թե արդյոք կիրականացվեն զորահրամանատարների ծրագրերը և հաշվարկները, թե ոչ, քանզի սենատը իրավունք ունի գործառության ժամկետը լրանալուց հետո ուղարկելու նոր կոնսուլի կամ էլ երկարաձգելու գործողինը» (Polyb., VI, 15)[17]:

Սենատին կամքին հնազանդվում էին անգամ դիկտատորը և ժողովրդական տրիբունը. «..դիկտատորը և տրիբունները վերջնականապես համաձայնվեցին,որ կլսեն սենատին» (Liv.,XXVII,6,9), «Սենատը առաջին իսկ նիստի ժամանակ հանձնարարեց դիկտատորին կազմակերպել Մեծ Խաղերը» (Liv.,XXVII,33.8), «Ժողովրդական տրիբունները սենատի հանձնարարությամբ ժողովրդին տեղեկացրեցին » (Liv.,XXVI,21.5): Հռոմեական հանրապետությունում իշխանության բարձրագույն կրողները սենատն ու ժողովուրդն էր (Cic. De re p. II.42,69; Sall. De Cat.coniur. 9,1; Ep. II.5;10): Սենատը առանց ժողովրդական ժողովի և ժողովրդական ժողովը առանց սենատի ոչ բնական երևույթ էր: Բայց Հռոմում սենատի իշխանությունը ավելի ամուր էր(Sall. Ep. II,10), դրա հիմքը նրա կրողների ունեցած auctoritas-ն էր, mos maiorum-ին հետևելու ավանդույթը և pietas-ը՝ փոխադարձ համընդհանուր բարոյական պարտավորությունը: Ձեռք բերած տարածքային նվաճումների արդյունքում Հռոմը կորցրեց քաղաքացիական համայնքի՝ civitas-ի հիմքերը: Նոր պայմաններում պարզունակ–կոլլեգիալ կառավարման ձևը կորցրեց իր արդյունավետությունը: Արդյունքում սենատը՝ հռոմեական պետականության, հռոմեական ավանդույթների, կենսական կարևոր սկզբունքների և իդեալների կրողը, կորցրեց իր հեղինակությունը և առաջացրեց նոր բարեփոխում իրականացնելու անհրաժեշտություն: Արդյունքում սենատի առաջնորդը, կարողանալով ձեռք բերել սենատի մեծամասնության աջակցությունը (օր. Պոմպեոսը), հնարավորություն էր ստանում նաև ձեռք բերելու անկախ ժողովրդի կամքը: Ավանդական համակարգին զուգընթաց ուժեղ անհատի,որը օժտված է արտակարգ լիազորություններով, և չեզոք է տրամադրված հանրապետության նկատմամբ, կառավարման գաղափարը սենատի համար

ընդունելի դարձավ[18]: Փաստորեն շնորհիվ իր կազմի, սենատը հետզհետե կենտրոնացրեց հռոմեական պետության ողջ քաղաքական փորձը, իսկ շնորհիվ իր գործառության շրջանակի, նա ժամանակի ընթացքում ձեռք բերեց գերազանցություն մյուս օրենսդրական մարմինների նկատմամբ (այդ պատճառով էլ կրում էր ordo amplissimus անվանումը): Նրա իշխանության զարգացման գագաթնակետն է համարվում Ք.ա. 300-135թթ., երբ նա էր ընդունում բոլոր որոշումները, ուղղորդում հանրապետությունում տեղի ունեցող բոլոր իրադարձությունները: Նրա ինքնուրույն կարգավիճակի մասին է վկայում նաև Senatus Populusque Romanorum (SPQR) բանաձևը,որտեղ սենատ բառը կանգնած է առաջին տեղում: Քաղաքացիական պատերազմի ժամանակ սենատը դիրքերը թուլացան.ուժեղացան անհատների դիրքերը. Մարիոս, Սուլլա և այլոք[19]: Վերը նշված նոբիլները կարողացան իրենց ձեռքում պահել սենատը, որտեղ նախկին կոնսուլները և ցենզորները գերակշռում էին և սենատը մի գործիք էր նրանց ձեռքին, որի միջոցով նրանք ուղղորդում էին Հռոմի քաղաքականությունը: Երկրորդ Պունիկյան պատերազմի ժամանակ սենատի ձեռք բերված անվիճելի հեղինակությունը Ք.ա. II դարում ավելի ամրապնդվեց: Նրա ուժերի համախմբումը անխուսափելիորեն արդյունքն էր անդրծովյան նվաճումների, որը միաժամանակ ընդարձակեց և ավելի բարդացրեց հռոմեական կառավարման համակարգը,ուստի և անհրաժեշտություն ծագեց միավորելու այդ բազմաթիվ նվաճումները մեկ մարմնի ձեռքում: Մինչ այդ սենատը հաջողությամբ իրականացրեց պետության ընդարձակման արդյունքում ծագած խնդիրների լուծումը, և նրա առաջնորդությունը դարձավ անխուսափելի մագիստրատների և ժողովրդական ժողովի համար: Պատերազմի կամ խաղաղության, նոր պայմանագիր ստորագրելու կամ նոր պրովինցիա հաստատելու հարցում նրա խոսքը օրենքին հավասար էր, և նա միջնորդ դատավորի դեր էր խաղում և օտարերկրյա կառավարությունների և պրովինցիաների համայնքների համար: Առաջընթացի այս մեխանիզմը իրեն արդարացրեց ժամանակի ընթացքում: Բայց պահպանողականության ոգին, որ բնութագրական էր հռոմեացիների համար ընդհանրապես, ամրապնդվեց կառավարող խավերի շրջանում, որոնք բացառեցին նոր մարդկանց և նոր գաղափարների մուտքը իրենց միջավայր: Ք.ա. 200թվ. հետո, իհարկե ոչ ամբողջությամբ, բայց կիսով չափ Հռոմի պատմությունը հիշեցնում է ուշացած ռեֆորմներ իրականացնելու փորձ[20]: Հանրապետությունը կազմավորումից ի վեր (Ք.ա. 510թ.) անընդհատ տարուբերվել է ամբոխապետության և բռնապետության միջև, սակայն ամեն անգամ իր մեջ ներուժ է գտել հաղթահարելու ծայրահեղությունները և հաստատելու քաղաքացիական համայնքի հավասարակշիռ գերակայությունը: Հենց այս բեմադրումով է ընթացել պատրիկների

և պլեյբեյների շուրջ երեքհարյուրամյա պայքարը: Արդյունքում աստիճանական բարեփոխումների՝ պատրիկների կաստայական հանրապետությունն իր տեղը զիջեց ժողովրդավարական կայուն սկզբունքներով (և հակակշիռներով) կարգաբերված Հանրապետության կառույցին:

Հավասարակշռությունը, սակայն, խախտվեց Պունիկյան պատերազմների դարաշրջանում (Ք.ա. 264-146թթ.), երբ հանրապետությունը կանգնեց մահացու վտանգի առաջ, և անհրաժեշտ էր կայացնել ճկուն ու ոչ ստանդարտ որոշումներ: Այդ գործառույթն իր վրա վերցրեց Սենատը՝ ստվերելով Աշխարհաժողովի դերը: Միաժամանակ սկսեց զորանալ ուժեղ անհատականությունների (ականավոր զորավարներ, պետական գործիչներ) դերը[21]:

Ծանոթագրություններ

[1]Patricus-The Oxford Classical Dictionary,1997. p.789,Plebs-opp.cit,p.845; Моммзен Т.,История Рима ,Т.I, М.,2001,с.279

[2] Трухина Н.Н.Политика и политики «золотого века» Римской Республики (II в. до н.э), М., 1986г., с.7-8, The Cambridge Ancient history,v.IX, 2000,p.40

[3] Кузнецова Т.И, Миллер Т.А,Античная эпическая историография, Геродот, Тит Ливий, М.,1984,с.115;Немировский А.И,У истоков исторической мысли, В., 1979г., с.181-182

[4] Утченко С.Л, Кризис и падение Римской Республики,М.,1965,с.16, Трухина Н.Н,указ.соч, с.20-21

[5] Ковалев С.И,История Рима ,Л.,1986г.,с.321,Paul Louis,Ancient Rome:an economic history of Rome from the origins to the impire,2006,pp.91-92

[6]Трухина Н.Н,указ.соч, с.21.24, Abbott F.F, A history and description of Roman political institution, Boston,1901,pp.77-78

[7] Ihne W., Researches into the history of the Roman constitution, London, 1853, p.160

[8] Asmis E. ,A new kind of model,Cicero's Roman constitution in De Republica, American Journal'of Philology,V.126(503),pp.377-378;Podes Stephan,Polybius and his theory of Anacyclosis,problems of not just ancient political theory, History of Political Thought,V.XII,p.577

[9] Скрипилев А. Е,Основы Римского Права,М.,2005,С.48, Fergus Millar, The Roman republic and the Augustan Revolution, North Carolina, 2002, p.112

[10] Lintott A.W,The constitution of the Roman republic ,1999,Cambridge,p.17

[11] Sherwin White A.N,The Roman citizenship ,Oxford,1939,pp.121-122p.

[12] Белкин М.В,Римский сенат в 4 в д.н.э., URL:/ http:/www.centant.ru; 19.04.2009

[13] Белкин М.В., Реформа сената 312 года до н.э., URL:/ http:/www.centant.ru; 19.04.2009.

[14] Кузищин В.И,История древнего Рима,М., 1981,с.63.

[15] Senatus,-The Oxford Classical Dictionary,1997, pp.973-974.

[16] Senatus,-Бартошек М.,Римское право, М.,1989,с.284.

[17] Белкин М.В., Сенат и промагистратуры Римской республики, URL:/ http:/www.centant.ru; 19.04.2009.

[18] Чеканова Н.В., Трансформация представлений о публичной власти и ее носителях в Риме в эпоху гражданских войн, URL:/ http:/www.centant.ru; 19.04.2009.

[19] Senatus,-Бартошек М.,указ. соч.,с.284

[20] Sherwin White A.N,op.cit.pp.243-244

[21] Մինասյան Լ.,Գնեոս Պոմպեոսը և հանրապետական կարգի ճգնաժամը Հռոմում, քաղաքական իդեալ և իրականություն, «Պատմություն և կրթություն» ,1-2 (2005), էջ 56: